Դատավորները՝ կարգազանց. 20 դատավորների վերաբերյալ հաղորդում է ներկայացվել Էթիկայի հանձնաժողով

17.12.2012 17:56

Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը 20 դատավորների վերաբերյալ համապատասխան հաղորդում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին: Այդ մասին Panorama.am-ը տեղեկանում է ՀՀ Վճռաբեկ դատարանի պաշտոնական կայքէջից:

Ըստ աղբյուրի, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից այս տարվա ընթացքում կատարված դատական գործերը ողջամիտ ժամկետներում քննելու և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու (ժամկետը երկարացնելու) վերաբերյալ թեմաներով ամփոփման արդյունքներով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով դատական պրակտիկայի ամփոփման արդյունքները, 20 դատավորի վերաբերյալ համապատասխան հաղորդում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին՝ դատավորի վարքագծի կանոնների խախտման առկայության հարցն օրենքով սահմանված կարգով պարզելու համար:

Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի պահանջները և կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատական պրակտիկայի ամփոփման արդյունքները՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը 2 դատավորի վերաբերյալ հաղորդում է ներկայացրել Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցն օրենքով սահմանված կարգով քննարկելու համար, որի քննության արդյունքներով երկու դատավորի նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ:

Ըստ աղբյուրի, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 154-րդ հոդվածի պահանջներով, կազմակերպել է 6 դատավորների մասնակցությամբ համապատասխան քննարկում, որի արդյունքներով 3 դատավորի կողմից ՀՀ դատական օրենսգրքի 90 հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի /քննությունն իրականացնել ողջամիտ ժամկետում՝ խուսափելով անհարկի ձգձգումներից/ խախտում արձանագրելով, դիմել է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին կարգապահական վարույթ հարուցելու

Աղբյուրը՝ http://www.panorama.am

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })